Սոցիալական Ապահովության Համարներ

ԻնչազգայիԱրդյո՞ք դուք գտնվում եք Ամերիկայի Միացյալ Նահանգներում ժամանակավորապես, հաճախելու համալսարան, լեզվական, արհեստական կամ այլ ուսումնական հաստատություն ձեր F-1, M-1 կամ J-1 ուսանողական արտօնագրությամբ: Ձեր ուսումնական հաստատությունը կարող է ձեզնից պահանջել ձեր Սոցիալական Ապահովության համարը: Որոշ համալսարաններ եւ ուսումնական հաստատություններ օգտագործում են Սոցիալական Ապահովության համարը որպես ուսանողի ինքնության փաստաթուղթ: Եթէդուք չունեք Սոցիալական Ապահովության համար, համալսարանը կամ դպրոցը պետք է ձեզ տրամադրի ինքնության այլ համար:

Սոցիալական Ապահովության համարները սովորաբար տրվում են այն մարդկանց, որոնք ունեն Միացյալ Նահագներում աշխատելու իրավունք: Սոցիալական Ապահովության համարը , գործածվում է արձանագրելու ձեր աշխատավարձը կառավարության մօտ եւ որոշելու ձեր իրավասությունը Սոցիալական Ապահովության նպաստների: **Սոցիալական Ապահովության Վարչությունը չի տրամադրի ձեզ Սոցիալական Ապահովության համար, պարզամես որ դուք ընդունվեք համալսարան կամ ուսումնական հաստատություն:**

Ես ի՞նչ պետք է անեմ, որպեսզի աշխատեմ Միացյալ Նահանգներում

Եթէդուք ցանկանում եք աշխատել համալսարանում, դուք պետք է դիմեք ձեր դպրոցի միջազգային ուսանողների բաժնի պատասխանատու պաշտոնյային: Այդ պաշտոնյան ձեզ բացատրում է ձեր աշխատելու իրավունքները համալսարանում եւ տեղեկություն է տալիս աշխատանքների մասին: Ձեր դպրոցը նաեւ կարող է հովանաւորել համալսարանից դուրս որոշակի աշխատանք Հայրենիքի Ապահովության Գրասենյակի (Department of Homeland Security) կանոնների համեմատ: **Եթե ձեր դպրոցը ձեզ թույլատրել է աշխատելու համալսարանում կամ դրանից դուրս, եւ դուք Սոցիալական Ապահովության իրավասության այլ պահանջները լրացնում եք, որոնք նկարագրված են յաջորդ բաժնում, դուք կարող եք ստանալ Սոցիալական Ապահովության համար:**

Ինչպե՞ս կարող եմ ստանալ Սոցիալական Ապահովության համար եւ քարտ

Ընդհանրապես Սոցիալական Ապահովության համարները տրվում են այն անձերի, որոնք ունեն Միացյալ Նահանգներում աշխատելու իրավունք Հայրենիքի Ապահովության Վարչության կողմից: Սոցիալական Ապահովության համար ստանալու համար՝

- Լրացրեք *Սոցիալական Ապահովության քարտ ստանալու դիմումնագիրը* (Ձեւաթուղթ SS-5-AM) եւ
- Ցույց տվեք մեզ բնագիր փաստաթղթեր, որոնք հաստատում են ձեր.
  - —Ներգաղթի կարգավիճակը.
  - —Աշխատելու իրավունքը.
  - —Տարիքը եւ
  - —Ինքնությունը:
- Ներկայացուցեք ձեր լրացված դիմումնագիրը ու փաստաթղթերի բնագիր օրինակները ձեր տեղական Սոցիալական Ապահովության գրասենյակին:

Ներգաղթի կարգավիճակ

Ձեր ԱՄՆ ներգաղթի կարգավիճակը ապացուցելու համար դուք պետք է ցույց տաք մեզ ԱՄՆ ներգաղթի վավերական փաստաթուղթ I-94-ը՝ *Arrival/Departure Record* (*Ժամանման/Մեկնման Ցուցագիրը*) , որը ձեզ տրվել է Միացյալ Նահանգներ ժամանելու պահին: Եթէ դուք F-1 կամ M-1 դպրոցական ուսանող եք, դուք պետք է նաեւ մեզ ներկայացնեք ձեր I-20-ը՝ *Certificate of Eligibility for Nonimmigrant Student Status* (*Ուսանողի ՈչՆերգաղթային Կարգավիճակի Իրավասության Վկայականը*): Եթէ դուք J-1 կամ J-2 փոխանակման կարգով ժամանած այցելու եք, դուք պետք է ներկայացնեք ձեր DS-2019-ը՝ *Certificate of Eligibility for Exchange Visitor (J-1) Status* (*Փոխանակման կարգով ժամանած այցելուի կարգավիճակի իրավասության վկայականը*):

Աշխատելու իրավունքը

Եթէ դուք F-1 ուսանող եք եւ իրավասու եք աշխատելու համալսարանում , դուք պետք է ներկայացնեք նամակ ուսումնական հաստատության կարավարիչ մարմնի կողմից , որը հաստատում է ձեր գործատիրոջ անունն ու ձեր կատարելիք աշխատանքը Մենք նաեւ կարիք ունենք տեսնելու այդ աշխատանքի ապացույցը, օրինակ՝ ձեր վերջին վճարման ստացականը կամ նամակ մը ձեր գործատիրոջ կողմից: Նամակը պետք է ստորագրված եւ թվարկված լինի ձեր ղեկավարի կողմից: Նամակը պետք է նկարագրի.

- Ձեր աշխատանքը.
- Ձեր գործի սկսելու թվականը .
- Աշխատելու ժամաքանակը, որով դուք աշխատում կամ աշխատելու եք եւ
- Ձեր ղեկավարի անունը, ազգանունը եւ հեռախոսահամարը:

Եթէ դուք F-1 ուսանող եք, որին թույլատրված է աշխատել գործնական ուսուցման հաստատության մէջ (practical training), դուք պետք է մեզ ներկայացնեք ձեր I-20 A-B փաստաթուղթը: Այս ձեւաթուղթի

(շրջել)

աշխատանքային բաժինը (երրորդ էջը) լրացված եւ ստորագրված պետք է լինի ուսումնական հաստատության կառավարիչ մարմնի կողմից:

Եթէ դուք F-1 կամ M-1 ուսանող եք եւ իրավունք ունեք աշխատելու համալսարանից դուրս, դուք պետք է մեզ ներկայացնեք աշխատանքի թույլտվության փաստաթուղթը (I-766 Կամ I-688B), որը ստացել եք Հայրենիքի Ապահովության Վարչության կողմից :

Եթէ դուք J-1 ուսանող եք, դուք պետք է մեզ ներկայացնեք նամակ ձեր հովանավորի կողմից: Նամակը պետք է լինի հովանավորի հաստատության նամակաթղթի վրա բնագիր ստորագրությամբ, որով թույլատրվում է ձեր աշխատանքը:

Տարիքը

Դուք պետք է ներկայացնեք ձեր ծննդյան վկայականը՝ եթե ունեք կամ կարող եք հեշտությամբ ստանալ զայն: Եթէ ոչ, մենք կարող ենք ընդունել այլ փաստաթղթեր, օրինակ ձեր անցագիրը կամ Հայրենիքի Ապահովության Վարչության (DHS) կողմից տրված փաստաթղթեր, որոնք հաստատում են ձեր տարիքը:

Ինքնության հաստատումը

Որպես ինքնության հաստատում մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստաթղթեր: Ընդունելի փաստաթուղթը պետք է լինի վավերական (ոչ ժամկետանց), ցույց տալով ձեր անունը, ազգանունը, ինքնությունը հաստատող տեղեկություն: Ցանկալի է որ այն ունենա վերջերս հանված լուսանկար: Սոցիալական Ապահովությունը պահանջում է ԱՄՆ ներգաղթի ձեր վավերական փաստաթղթերը: Ներգաղթի ընդունելի փաստաթղթերն ընդգրկում են.

- Ցեւաթուղթ I-551-ը (ներառում է մեքենայով կարդացվող ներգաղթի վիզան որ գտնվում է ձեր օտարերկրյա ոչ ժամկետանց անցագրի մէջ).
- I-94-ը ձեր օտարերկրյա ոչ ժամկետանց անցագրով կամ
- Հայրենիքի Ապահովության Վարչության կողմից ձեզ տրված աշխատանքի թույլտվության քարտը (I-766 կամ I-688B):

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն բնագիր կամ վավերացված այն կազմակերպության կողմից որ զանոնք պարենաւորած է : Մենք չենք կարող ընդունել կրկնօրինակներ կամ նոտարի կողմից հաստատված փաստաթղթեր: Մենք նաեւ չենք կարող ընդունել ստացագիրներ որոնք ցույց են տալիս թէ դուք սպասում եք մեր պահանջած փոստաթղթերին: Մէկ փաստաթուղթը մենք կարող ենք օգտագործել երկու նպատակով: Օրինակ, մենք կարող ենք Հայրենիքի Ապահովության Վարչության կողմից ձեզ տրված աշխատանքի թույլտվությունը օգտագործել որպես աշխատելու իրավունք եւ ինքնությունը հաստատելու վկայություն: ***Այնուամենայնիվ, դուք պետք է ներկայացնեք երկու տարբեր փաստաթղթեր:***

Արդյո՞ք Սոցիալական Ապահովության համար պետք է ունենամ նախքան աշխատանքի սկսելս

Մենք չենք պահանջումոր դուք ունենաք Սոցիալական Ապահովության համար աշխատելու համար: Բայց Հարկային Վարչությունը պահանջում է գործատէրերիցոր նրանք արձանագրեն ձեր աշխատավարձերը, օգտագործելով Սոցիալական Ապահովության համարը: Սոցիալական Ապահովության համարի սպասման ընթացքում , ձեր գործատէրը կարող է օգտագործել մեր կողմից տրված ստացագիրը, որում նշվում էոր դուք դիմել եք Սոցիալական Ապահովության համարի: Ձեր գործատէրը նաեւ կարող է օգտագործել ձեր ներգաղթի փաստաթղթերը որպես Միացյալ Նահանգներում աշխատելու թույլտվության վկայություն: Գործատէրերը կարող են գտնել յաւելյալ տեղեկություն համացանցի մեր կայքէջում ***www.socialsecurity.gov/employer/hiring.htm***:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՚կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10181-AM
International Students And Social Security Numbers (Armenian)
December 2005